ԼԵՌ
1531

Նոր-Ջուղա
1912

1999

LGN
1531

ՆՈՐ–ՋՈՒՂԱՅԻ

ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆՔԻ

ՏՊԱՐԱՆԸ

1640–1912

Տ. Ա.-ի

ՆՈՐ–ՋՈՒՂԱ

Տպարան Ամենափրկչ. Ս. Վանքի

1912

43748-Ա.Հ.

ՆՈՐ — ՋՈՒՂԱՅԻ

ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆՔԻ

ՏՊԱՐԱՆԸ

Նոր-Ջուղայի Ամենափրկչեան ս. վանքը, որ ԺԶ-րդ դարի սկզբներին մի մտաւոր կենտրոն էր հանդիսանում իր բարձրագոյն դպրոցով ու ճոխ մատենադարանով, բնականաբար կարիք պիտի զգար և՛ տպարան ունենալու, որ և ունեցաւ:

Ահա թէ ինչ է գրում Լէօն իր «Հայկական տպագրութիւն» գրքում այս տպարանի մասին.

«Հասկանալի է, որ Ամենափրկչեան վանքի շրջանում պիտի լաւ զգայվէր տպարանի կարևորութիւնը։ Եւ որովհետև անկեղծ ոգևորութիւնը ընդունակ է գործ ստեղծել նոյն իսկ ոչնչից, ուստի և Խաչատուր վարդապետը (վանքի առաջնորդ) իր օգնականների հետ գլուխ բերեց մի այնպիսի գործ, որ աւելի հրաշքի էր նման։ Նա բաց արաւ Ջուղայում տպարան և 1640 թուականին հրատարակեց «Հարանց Վարք» անունով գիրքը։ Տպարան Պարսկաստանի խորքերում, այն էլ այդ խաւար ու բարբարոսական ժամանակներում

ССР
Կ-15-31-ԱԶ
Գ-28181-62
ՀՁ 1536

սա ինքն ըստ ինքեան մի մեծագործութիւն էր, որ պատիւ էր բերում հայի կուլտուրական ընդունակութիւններին: Բայց հրաշալին այդ չէ, այլ այն, որ Ջուղայի տպարանը ամբողջովին շինուած էր տնային միջոցներով: Խաչատուր վարդապետը ոչ ոքից չէր սովորել տպագրական արւեստը, այդպէս էին և նրան շրջապատողները: Բայց նրանք կարողացան խելքով ըմբռնել, թէ ինչ է պահանջվում և փորագրեցին տառեր, շինեցին մամուլ, մինչև իսկ թուղթն էլ պատրաստեցին տեղն ու տեղը, շարեցին, տպագրեցին: Ասել հարկաւոր չէ, որ այդպիսի ինքնահնար միջոցներով գլուխ բերած գործը խոշոր պակասութիւններ պիտի ունենար. և իրաւ, Ջուղայի այդ անդրանիկ տպագրութիւնը տգեղ էր ու անկատար, աշխատողների անհմտութիւնն էր ցոյց տալիս:

«Բայց պակասութիւնները ոչինչ են այն փաստի առաջ, որ այդ բոլորը պատրաստված էր հայ մարդու ձեռքերով. Սփայում, առանց մասնագէտ վարպետների ցուցմունքների և աջակցութեան: Միայն դէպի գործն ունեցած սաստիկ սէրն էր կարող դրդել Խաչատուր վարդապետին և նրա օգնականներին յանձն առնել այդքան ծանր աշխատանք, չը յուսահատվել հազարաւոր դժուարութիւններից: Այս է ամենից կարևորը:

«Գրքի յիշատակարանը թողնում է ձեզ վրայ

գեղեցիկ տպաւորութիւն: Դուք երեւակայում էք մահմեդական աշխարհի մի հեռաւոր անկիւնում շինած քրիստոնէական վանք, ուր սովորական ծուլութեան և հացկատակութեան տեղ եռում է գաղափարական գործունէութիւնը մտածում են, ծրագիրներ են կազմում, թէ ինչպէս անեն, որ լոյս տեսնայ սարսափելի դժբախտ ժողովուրդը Հայաստանում և ինչպէս տարածեն այն գործիքը, որ այդ լոյսն է տարածում: Հաւաքված են հոգեւորականներ և աշխարհականներ, ծեր ու երիտասարդ, քահանայ ու վարդապետ, աշակերտ ու վարպետ, բաժանել են աշխատանքը և գործում են մեծ համերաշխութեամբ: Անտարբեր ու անգործ չէ նոյն իսկ ծերունի խոհարար Տէր Յովսէփը, նա էլ օգնում է եղբայրներին: Նայելով շրջապատող պարսկական իրականութեան, մտաբերելով, որ այդ աշխատաւորներից շատերը տարիներ առաջ բռնութեամբ հեռացրված էին իրանց հայրենի հողից և արտասուքներով էին թրջում այն երկար ճանապարհը, որ վերջը բերեց հասցրեց նրանց այստեղ, տեսնելով թէ որպիսի յոյսերով և սրբազան ակնկալութիւններով են այդ մարդիկ պտըտում իրանց ձեռքով շինած անպաճոյճ, կոպիտ մամուլի շուրջը, դուք յիշում էք ֆրանսիական հըռչակաւոր պատմաբան Միշլէին, որ ԺԹ դարի առաջին կէսից հիացմունքով նայում էր ԺԶ դարի վենետիկեան մեծ տպագրիչների ջահան աշխա-

տութիւններին և բացականչում էր «Սուրբ գործ»։

«Իր սարքած առաջին գործով Խաչատուր Կեսարացին, բնականաբար, չէր կարող բաւականանալ, այդ պատճառով էլ աղաչում էր ընթերցողներին ներողամիտ լինել տպագրական պակասութիւնների վերաբերմամբ, որովհետև, ասում է, այդքանը միայն կարելի եղաւ անել։ Բայց նա միևնոյն ժամանակ միջոցներ է ձեռք առնում, որ օգտակար գործը կատարեալ ու գեղեցիկ էլ լինի։ Առանց Եւրոպայի օգնութեան յոյս չունենալով հասնել այդ նպատակին, նա 1639 թուին, երբ «Հարանց Վարքը» դեռ տպված վերջացած չէր, Եւրոպա ուղարկեց իր աշխատակիցներից մէկին, Յովհաննէս վարդապետին, արուեստը ուսումնասիրելու և նոր տեսակ տառեր պատրաստել տալու համար։

«Չը սպասելով վարդապետի վերադարձին, նոյն այդ ինքնահնար տպարանը 1642-ին լոյս է հանում և մի «Ժամագիրք», որ ցոյց է տալիս թէ Ամենափրկչեան վանքի աշխատաւորները բաւական առաջադիմել էին իրանց գործի մէջ. տպագրութիւնը առաջինի հետ համեմատած, աւելի լաւ է, բայց նշանաւորը այն է մանաւանդ, որ պատրաստվել են նոր, աւելի կանոնաւոր տառեր։ Ջուղայում հեշտ էր նկարչական նրբութիւններ հասկանալը, հեշտ էր անբաւական մնալ եղածով և աւելի լաւին ձգտել։ Այնտեղ կար գեղագիտական

զարգացած ճաշակ։ Հայ մեծատունների ապարանքների պատերը այդ ժամանակ ծածկված էին գեղեցիկ ծաղկանկարներով և պատկերներով. և այդպէս զարդարողը երևելի պատկերահան վարպետ Մինասն էր, մի Ջուղայեցի հայ, որին Առաքել պատմագիրը անուանում էր հայոց ազգի պարծանք։ Այդ տաղանդաւոր մարդը նկարչութիւնը սովորել էր Բերիայում, մի ֆրանսիացու մօտ և իր ճարտարութեամբ ու հիանալի գործերով Պարսկաստանի մէջ մեծ անուն հանեց, դարձաւ պարսից շահի պալատական նկարիչ։ Մենք չգիտենք թէ վարպետ Մինասը ինչ մասնակցութիւն ունեցաւ Ջուղայի տպագրութեան մէջ. բայց չենք կարող կասկածել, որ նրա նկարների վրա գեղարուեստական ճաշակ զարգացրած Ջուղայեցին չէր կարող բաւական համարել և այն առաջադիմութիւնը, որ ցոյց էր տուել Ամենափրկչի տպարանը երկու տարուայ մէջ։ Ուստի Խաչատուր վարդապետը «Ժամագրքի» յիշատակարանի մէջ էլ ներողութիւն է խնդրում և յայտնում է, որ Յովհաննէս վարդապետը արդէն շրջում է «լատինացոց աշխարհում»՝ տպարանական գործը լաւ սովորելու համար . . . . .

«Վերջացնելով գործը Իտալիայում, Յովհաննէս վարդապետը ուղարկում է տպարանը Ջուղա և ինքն էլ վերադառնում է այնտեղ՝ տարիների փորձով հմտութիւն ձեռք բերած։ Բայց տանը

նրան սպասում էր հուսաթափութիւն. Խաչատուր Կեսարացին վախճանվել էր և Ամենափրկչեան վանքում արդէն կային մարդիկ, որոնք աւելորդ էին համարում տպագրական գործը: Վարդապետը ստիպուած է լինում Ջուղայում էլ մաքառել, այս անգամ հայրենի տգիտութեան դէմ, և սկսում է տպագրութիւններ. թէև առանձին աջողութիւն չէ ունենում: Յայտնի է հաստատապէս, որ նա 1647 թւին հրատարակեց «Պարզատումար Աղաբիայի» անունով գիրքը. կայ վկայութիւն թէ նա ուրիշ գրքեր էլ տպագրեց (օրինակ ինչ-որ «Լիակատար Պատմութիւն»), մինչև իսկ սկսեց Աստուածաշնչի տպագրութիւնն էլ, որը, սակայն, հարկադրված եղաւ կիսատ թողնել: Խաչատուր Կեսարացու մահից յետոյ հինգ տարի Ջուղան մնաց առանց առաջնորդի և կառավարվում էր նրա աշակերտ Դաւթի ձեռքով: Այդ ժամանակ Յովհաննէս վարդապետի դէմ հակառակութիւնը այնքան սաստկանում է (դուցէ կռուածաղիկը առաջնորդական աթոռն էր), որ նա հարկադրված է լինում գնալ Էջմիածին, ուր նրան եպիսկոպոս են ձեռնադրում և ուղարկում Հին Ջուղա: Այստեղ հմուտ տպագրիչը իր ժողովրդի իրաւունքները պաշտպանելիս սպանուեց. Ջուղայի տպարանը առժամանակ փակված մնաց»:

Լէօ «Հայկ. Տպագր.» Հատ. Ա. գլ. Է.

1680-ական թուականներին, Նոր-Ջուղայում լուսաւորչական և կաթոլիկ հայերի միջև մի մեծ խռովութիւն է ծագում, մինչ այն աստիճան, որ միմեանց վարկը ձգելու համար, ոչ մի անազնիւ միջոցի առաջ կանգ չեն առնում երկու կողմից:

Ահա այսպիսի մի ժամանակ, վանքի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը անհրաժեշտ է համարում վերանորոգել Յովհաննէս վարդապետի մահուամբ փակուած տպարանը, կարգի է բերում մամուլը և 1687 թուին հրատարակում վանքի միաբան Աղէքսանդր վարդապետի «Գիրք որ ասի վիճաբանական» (կաթոլիկների դէմ գրուած) աշխատութիւնը:

Հետեւեալ տարում, այն է 1688թ.-ին լոյս է տեսնում նոյն հակաճառական բովանդակութեամբ, վանքի մի այլ միաբան Յովհաննէս Մրքուզ վարդապետի «Գիրք համառօտ վասն խոկալէս և ճշմարիտ հաւատոյ» աշխատութիւնը:

Նոյն գրքի իւրաքանչիւր գլխի վերնագիրը կրում է և լատիներէն թարգմանութիւն եւրոպական լեզուով, որից հասկացւում է, որ Յովհաննէս վարդապետի Եւրոպայից բերած և 265 տարի մեզանից առաջ գործող մամուլը, բացի հայերէնից ունեցել է և եւրոպական տառեր. մի յարմարութիւն, որից զուրկ է դժբախտաբար Ամենափրկչ. վանքի տպարանը մեր օրերում:

Սակայն մէկ տարուց յետոյ, տպարանը զար-

ձեռալ փակման է դատապարտւում և այս անգամ ընդ միշտ։ Հակառակորդները կառավարութեան մօտ չարախօսում են, իբր թէ վանքի տպարանից լոյս տեսած գրքերի մէջ Ղօրանին հակառակ բաներ կան։ Կառավարութիւնն էլ առիթից օգտուելով արգելում է Նոր-Ջուղայում հայերէն գրքեր տպագրելը։

Թէ այս մամուլը յետոյ ինչ է լինում, ոչ մի տեղեկութիւն չկայ և ոչ էլ նրա որ և է կտորը ճարւում է վանքումը։ Սակայն փաստ է, որ առ ի չգոյէ տպագիր մամուլի, ձեռք են բերում մի վիմատիպ մամուլ, որով երկար ժամանակ, այն է, մինչև 1877 թիւը տպագրելիս են լինում անհրաժեշտ գործեր և դասագրքեր։ Սոյն վիմատիպ մամուլի զանազան կտորները մինչև այժմ գտնւում են վանքումը, ինչպէս և նրանով տպագրուած դասագրքերից։

1844 թ.-ին Ջաւայաբնակ Նոր-Ջուղայեցի մի վաճառական Մանուկ Յօրդանանեան, իր Եւրոպա կատարած ճանապարհորդութեան միջոցին ականատես լինելով և քաջ ըմբռնելով, որ մի ազգի մտաւոր և բարոյական յառաջադիմութեանն նպաստող գործօններից գլխաւորն մամուլն—տպագրութիւնն է, ի թիւս այլ բարեգործութիւնների, բաւական փող ծախսելով մի սար տպարան է ուղարկում իր հայրենիքը՝ Նոր-Ջուղա, որպէս նուէր Ս. Ամենափրկչեան վանքին։

Սակայն, որովհետև ոչ ոք չէր գտնւում, որ կարողանար սոյն մամուլի միմեանցից բաժանած մասերը միացնելով ճանապարհ ձգել, ուստի երկար ժամանակ վանքի մի անկիւնումը թափուած մնում է ապարդիւն։

Յիշատակութեան արժանի է նորընծայ Դիոնիսիոս Տէր Եղիազարեան Նոր-Ջուղայեցի քահանայի մի համակրելի ձեռնարկը։ Նա 1863 թըւին անգործութեան մատնուած մամուլի տառերից մի որոշ քանակութեամբ իր տրամադրութեան ներքոյ վերցնելով, իր իսկ ձեռքով շարում և մի փոքրիկ ճնշիչ մեքենայի միջոցով տպագրում է Նոր-Ջուղայում լոյս տեսած առաջին օրացոյցը։ Գրքոյկի տպագրութիւնը, որ Գուտէնբէրգի առաջին փորձերն է յիշեցնում, ունի տպարանական բազմաթիւ պակասութիւններ։ Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դա ամբողջապէս մի տեղացի հայ քահանայի անհատական աշխատութեան արդիւնք է, մարդու վրայ թողնում է մի գեղեցիկ տպաւորութիւն։

1877 թուին վանքի առաջնորդ Գրիգորիս արք-եպիս. Յովհաննիսեանը մի կերպ կարգի է բերում 33 տարի բանտարկուած մամուլը և բաւական դժուարութեամբ յաջողեցնում տպագրութիւնը։ Թէև մամուլը հին սիստեմի է լինում և տառերն էլ բաւական անճաշակ, այնուամենայնիւ իր ժամանակին մեծ ծառայութիւն է մատու-

ցանում, զանազան դասագրքեր և Թեմի վերաբերեալ պաշտօնական գործեր տպագրելով։

1892 թուին Թեմական առաջնորդ Եսայի արք-եպիս. Աստուածատրեանը Կովկասից բերել է տալիս մի քանի տեսակ նոր և ճաշակաւոր տառեր, ինչպէս և Թեհրանից մի հնուտ գրաշար, որով տպագրութիւնը մի որոշ աստիճանի յառաջադիմում է Նոր-Ջուղայում։

1904 թուին Առաջնորդ. փոխանորդ Բագրատ վարդապետ Վարդազարեանը ընդարձակում է Ամենափրկիչ վանքի տպարանը, աւելացնելով երկու նոր բաժանմունքներ և ճոխացնում նրան Բաքուաբնակ Յովսէփ Թումայեանի յիշատակին նուէր տուած մի արագատիպ մամուլով, բաւական քանակութեամբ նոր տառերի ու զարդերի պաշարով և տպարանական կահ-կարասիներով։

Ամենափրկիչ վանքի տպարանում սկզբից մինչև մեր օրերը տպագրուել են հետևեալ գործերը.

№

1. Վարք հարանց—Խաչատուր (կեսարացի) առաջնորդի—1640 թ. *)
2. Ժամագիրք—1642 թ.
3. Պարզատումար Ազարիայի—Յովհաննէս վարդապետի—1647 թ.

*) Տպագրութեան գիւտից միայն 185 տարի յետոյ։

4. Գիրք որ ասի վիճաբանական—Աղեքսանդր վարդապետի—1687 թ.
5. Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ—Յովհաննէս Մրքուզի—1688 թ.
6. Օրացոյց—1868 թ.
7. Այբբենարան—1870 թ.
8. » 1877 թ.
9. Հեզարան—1877 թ.
10. Հաւատապատում—Մսերայ—1877 թ.
11. Համառօտ պատմ. Հայոց—փոխադր. Տէր Սեղբեստրոս քահ. Յովհաննէսեանցի—1877 թ.
12. Տարերք քերականութեան—հ. Բագրատունու—փոխադր. Տ. Մեսրոպ Կ. Դաւթեանցի 1878 թ.
13. Համառօտ պատմ. ս. Գրոց—Դարագաշեանցի—փոխադր. Աւետիք Կ. Ջոհրապեանցի—1879 թ.
14. Հրահանգ Քրիս. հաւատոյ—Մսերեանցի 1879 թ.
15. Հաւաքումն Քրիս. պարտուց—Տէր Սեղբեստրոս քահ. Յովհաննէսեանցի—1880 թ.
16. Նկարագիր հանդիսի տօնի ս. Վարդանանց և հիմնարկ. Ազգային կեդր. դպրոցի—Գէորգ Կ. Ջոհրապեանցի—1880 թ.
17. Սահմանադրութիւն ժողովրդ. հայոց Ջուղայի—թարգմ. Խաչիկ Թովմասեանցի—1881 թ.
18. Պատմ. Նոր-Ջուղայու երկհատոր—Յարութիւն Տէր Յովհաննեանցի—1881 թ.
19. Կենսագր. Թադէոս արք-եպիս. Բէկնազարեանի—Յար. Տէր Յովհաննեանցի—1881 թ.

20. Պարտիզակ — Մ. Քահ. Փափազեանի — 1881 թ.
21. Գիրք փոխասաց մանկանց — 1882 թ.
22. Պատարագ — 1882 թ.
23. Համառօտ կենսագր. ս. Մարիամու Յարութիւնեան և Մանուկայ Յորդանանեան — Գ. Տէր Գ. Գասպարեանի — 1883 թ.
24. Ապացոյցք Քրիս. հաւատոյ — Տէր Մեղքեսերոս Քահ. Յովհաննէսեանի — 1886 թ.
25. Սոփերք կայրդականք Զօհրապեանց — խմբ. Աւետիք Կ. Զօհրապեանցի — 1886 թ.
26. Նուագք հոգևորք — Անգլ. թարգմ. Ե. Ա. Եղիայեանցի — 1888 թ.
27. Ժամագիրք Հայաստ. Եկեղեցւոյ — 1889 թ.
28. Վկայաբանութիւն ս. Կատարինէի — Տէր Պսակ Քահ. Յակոբջանեանցի — 1889 թ.
29. Նկարագր. ԺԶ-րդ ամի քննութեան աշակերտ ս. Կատ. օր. դպրոցի — 1889 թ.
30. Համառօտ վարք ս. Յակոբայ Հայրապետի — հրատ. Տ. Պսակ Քահ. Յակոբջանեանցի — 1890
31. Տեղեկագիր ս. Կատ. օր. դպրոցի — 1890 թ.
32. Կենսագր. վեհ. Մ. Խրիմեան կաթ. — 1891 թ.
33. Խօսք և գործք Խաչատուր վարդապետ Կարապետեանի — 1892 թ.
34. Կեանք Թադէոս արք-եպիս. Բէգնազարեանի — 1892 թ.
35. Մայրենի լեզու Ա. տարի — Ղազարոս Աղայեանցի — 1893 թ.

36. Մայրենի լեզու Բ. տարի — Ղազարոս Աղայեանցի — 1893 թ.
37. Աւագ շաբաթ — 1895 թ.
38. Սկզբ. ուսումն. մայրենի լեզուի — Ե. Կ. Գ.-ի. — 1896
39. Քրիստ. վարդապետութիւն — Գ. Քահ. Տէր Գաբրիէլեանցի — 1897 թ.
40. Պատարագ — Բ. տիպ — 1897 թ.
41. Կարգ և կանոնք Հայկ. Միաբան. Ջուղայ — 1898.
42. Գիրք փոխասաց մանկանց — Բ. տիպ — 1898 թ.
43. Հաւատապատում — Բ. տիպ — 1898 թ.
44. Համառօտ դասագիրք Հայոց ազգի պատմ. — Տիգրան Թ. Աբգարեանցի — 1899 թ.
45. Համառօտ Աշխարհագրութիւն — Անգլ. թարգմ. Աստուածատուր Ղ. Աղանեանցի — 1899 թ.
46. Ուղևորութիւն ս. Էջմիածնից Նոր-Ջուղա — դպ. Մկրտիչ Երկարակեցեանի — 1899 թ.
47. Ուսումնարան շինենք — խմբ. դպ. Մ. Երկարակեցեանի — 1899 թ.
48. Աշխ. Քերականութիւն — Ն. Մելիք Թանգեանի — 1900 թ.
49. Գործն. Քերականութիւն Ա. Մ. Գարագաշեանի — փոխ. Եզնիկ աբ. Երկարակեցեանի — 1900
50. Մայր. լեզու Գ. տ. — Ղ. Աղայեանցի — 1900 թ.
51. Քարոզի վարժութիւններ — 1901 թ.
52. Կանոնագր. Ն.-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկ. — 1901 թ.

53. Պատասխան Թ. Տէր Ստեփաննոսեանի գըր-քոյկի—1901 թ.
54. Վարք ս. Կատարինէի—Բ. տիպ 1902 թ.
55 Խորհրդաւոր ս. պատարագի—1902 թ.
56. Մայր. լեզու Ա. տ.—Ղ. Աղայեանի—1903 թ.
57. » » Բ. » » » »
58 » » Գ. » » » »
59. Արեգնազան—Ղ. Աղայեանի—1904 թ.
60. Հայրենիքի համար և Տասնապետ Անվախը—Ֆրանս. թարգմ. Մ. Ղ.-ի—1905 թ.
61. Սալմաստ—Արշակ Աքայեանի—1906 թ.
62. Ալադդին—անգլ. թարգմ. Ե. վ. Երկարակե-ցեանի—1906 թ.
63. Աղիւսակներ Ռուս. դրամը Պարս. վերածելու—Կ. Աբեանցի—1906 թ.
64. Նէզամիմալէ—պարսկ. թարգմ.—Յար. Յորդա-նանեանցի—1906 թ.
65. Բանահիւսութեան տեսութիւն—Ար. Աքայեա-նի—1907 թ.
66. Երգարան—Հրատ. Արշալոյսի—1907 թ.
67. Աղօթագիրք աշխարհաբար—Տէր Սեղբեստրոս քահ. Յովհաննէսեանի—1907 թ.
68. Մայր. լեզու Ա. տ.—Ղ. Աղայեանի—1908 թ.
69. » » Բ. » » » »
70. » » Գ. » » » »
71. Կանոնադրութիւն Ն.-Ջուղայի Հայոց Կրթ. Գրակ. ընկերութեան—1908 թ.

72. Կենսագր. Մատթէոս Բ. վեհ. Կաթողիկոսի—Նիւխանզադէի (արտատպ. «Տարազ»-ից)—1909 թ.
73. Նախաչաւիղ և Ծաղկաքաղ—Կ. Կոստանեան-ցի—1909 թ.
74. Պատարագ—Գ. տիպ—1910 թ.
75. Քրիս. վարդապետութիւն—Գ. ա. ք. Տէր Գաբ-րիէլեանցի—Բ. տիպ.—1910 թ.
76. Դասընթացք մանկավարժութեան—Ռուսերէնից թարգմ.—Ա. Գերասիմեանի—1911 թ.
77. Ծրագիր Ն.-Ջ.-ի ազգ. երկսեռ դպր.—1911 թ.
78. Գողացուած Իշխանուհին—անգլ. թարգմ.—Ե. վ. Երկարակեցեանի—1911 թ.
79. Կենսագր. Գէորգ Ե. վեհ. Կաթողիկոսի—(ար-տատպ. «Հովիտ»-ից)—1912 թ.
80. Կանոններ Ն.-Ջուղայի ազգ. դպրոցների աշա-կերտ-ուհիների համար—1912 թ.
81. Դասագիրք ընդհ. պատմութեան— Ֆրանս. թարգմ.—Ա. Գերասիմեանի—1912 թ.
82. Ն.-Ջուղայի Ամենափրկչեան ս. վանքի տպա-րանը—խմբ. Տ. Ա.-ի—1912 թ.

—Օրացոյցներ—1878—1912 թ.

—Տարեւոր տեղեկագիր կառավարչ. Բատաւիայի հայ հաստատութիւնների—1879—1912 թ.

—Համառօտութիւն եկամտից Ն.-Ջուղայի Ազգ. կրօնական, Կրթական, և Բարեգործական հաստատութիւնների—1892—1912 թ.

—Ուսումնական և տնտեսական տեղեկագիր Նոր-Ջուղայի Ազգ. երկսեռ դպրոցների հոգաբարձութեան—1899—1912 թ.

—«Նոր-Ջուղայի լրաբեր» ամսաթերթ—խմբ. Բագրատ վ. Վարդազարեանցի—1904—1908 թ.

—Զանազան յայտարարութիւններ, կոնդակներ, ծրագիրներ, պաշտօնական ազդեր, թեմական գործեր և տպագրական այլ և այլ պատուէրներ։

Հայ տպագրութեան 400-ամեայ եւ տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանը Նոր—Ջուղայում

Ազգ. դպրոցների մանկավարժական խորհուրդըն ի նկատի ունենալով, որ մօտ ապագայում ամբողջ Հայութեան կողմից տօնուելու է Հայոց տառերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան սկզբնաւորութեան 400-ամեակը, դրեց այն հարցը, թէ Ազգային դպրոցներն ինչ կերպով պիտի մասնակցեն այդ տօներին։ Որոշուեց կատարել հնարաւորութեան չափով շքեղ հանդէս՝ ունենալով երգեր, արտասանութիւններ և ճառախօսութիւններ։

Բանախօսել տպագրութեան սկզբնաւորութեան մասին յանձն առաւ պ. Ս. Գերասիմեանը, իսկ տառերի գիւտի մասին՝ պ. Ս. Յովհաննիսեանը։ Արտասանութիւններ պատրաստելու գործն յանձն առաւ պ. Մկր. Կարապետեանը, իսկ Տէր Վահան Աղանեան և Տէր Գարեգին Կիրակոսեան քահանաները՝ ընտրել հին տպագրուած գրքերից հետաքրքրական կտորներ և տալ աշակերտներին՝ հանդէսին կարդալու համար։ Բացի այդ՝ որոշուեց ցուցադրել թէ Ամստերդամում և թէ տեղումս տպագրուած հին գրքերի օրինակներ և այլ գործեր, որոնք հետաքրքրական լինելուց բացի՝ պարզ ցոյց

им. А. Мясникяна

կատն տպարանական գործի զարգացումը։ Յարմար դատուեց և վճռուեց տպագրել և ձրիաբար ժողովրդի մէջ ցրել Լէօի «Հայկական տպագրութիւն»-ից այն մասը, որ վերաբերում է Նոր-Ջուղայի Ամենափրկչ. վանքի Տպարանին։ պ. Տիգրան Աբգարեանցը յանձն առաւ կցել դրան լրացուցիչ ծանօթութիւններ և սկզբից մինչև մեր օրերը նոյն տ-պարանից լոյս տեսած գրքերի ցուցակը։

Որոշուեց սոյն գրքոյկին աւելացնել նաև յոբելեանի առթիւ եղած ու լինելիք կարգադրութիւնները, ինչպէս և հանդէսի ծրագիրը։

Հոկտ. 5-ին Առաջնորդ. Խորհրդարանի հրաւէրով Նոր-Ջուղայի Քահանաներից, Եկեղեցիների և Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձուներից և Ուսուցիչներից բաղկացած մի ժողով կայացաւ Ազգ. Առաջնորդարանում։

Խորհրդարանի անդամ Արժ. Տէր Մեսրոպ խաչ. քահ. Դաւթեանը ժողովը բանալով, կարդաց և ժողովականները լսեցին յոտնկայս Ազգիս Վեհ. Հայրապետ Տ. Տ. Գէորգ Ե. սրբազնագոյն կաթողիկոսի (Նոր ստացուած) սրբատառ կոնդակը, որով առաջարկում էր Խորհրդարանին, յանուն վերոյիշեալ մարմինների, փութով կարգադրութիւն անել Հայ տպագրութեան 400-ամեայ և Տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանի առթիւ, որպէսզի

Հայոց քաղաքակրթութեան և բարոյական վերածնութեան մեծ յոբելեանը կատարուի Հոկտ. 13-ին ս. Թարգմանչաց տօնի օրը։

Կոնդակի ընթերցումից յետոյ, առաջարկուեց ժողովականներին, խորհրդակցել ըստ կարելւոյն շքեղութեամբ և վայելչօրէն կատարելու համազգային այդ մեծ յոբելեանը։

Ազգ. երկսեռ դպրոցների տեսուչ՝ պ. Արմենակ Գերասիմեանը թռուցիկ կերպով խօսեց Հայոց տառերի գիւտի և տպագրութեան նշանակութեան մասին, ընդգծելով նրանց կատարած ահագին դերը մեր կեանքում։ Շեշտեց և այն, որ Նոր-Ջուղայի Ամենափրկչ. վանքի տպարանը փառաւոր տեղ է գրաւել և առանձին նշանակութիւն ունի Հայ տպագրութեան գործում, հետևաբար Նոր-Ջուղան պարտաւոր է լայն մասնակցութիւն ունենալ առաջիկայ յոբելեանի հանդէսին։ Յայտնեց նաև ուսուցչական կազմի այն որոշումները, որ կայացել էին մանկավարժական վերջին նիստում, նոյն յոբելենական հանդէսի կատարման առթիւ։

Հոգաբարձութեան փոխ-նախագահ պ. Յովհաննէս Տէր-Կիրակոսեանը իր և ժողովականների կողմից շնորհակալութիւն յայտնեց ուսուցչ. խըմբին, նրա ինքնաբերաբար նախաձեռնած և կայացած որոշումների մասին, առաջարկեց նաև եօթն հոգուց բաղկացած մի Յանձնաժողով ընտրել,

մնացած գործերի մասին հոգալու։

Կարծիքների փոխանակութիւնից յետոյ, միաձայն հաւանութեամբ ընտրուեցան հետևեալ անձինք որպէս Յոբելենական Յանձնաժողովի անդամներ. Արժ. Տէր Վահան քահ. Աղանեան, պ. Թադդէոս Տէր Գալստանեան, պ. Մարտիրոս Աբգարեան, պ Պօղոս Շուքուրեան, պ. Տիգրան Աբգարեան, պ. Անդրէաս Սարգսեան և պ. Սիմէօն Գաբրիէլեան։

Հոկտ. 7-ին Ազգ. Առաջնորդարանում կայացաւ Յոբելենական Յանձնաժողովի նիստը, ուր ի միջի այլոց որոշուեց.

1— Տպուած ծանուցում ցրել ի գիտութիւն հայ հասարակութեան, յայտնելով, որ Հոկտ. 13-ին, Յոբելենական հանդէսի օրը, առաւօտեան Ամենափրկչ. վանքում մատուցուելու է ս. պատարագ և Հայ-գրականութեան հանգուցեալ գործիչների յիշատակին կատարուելու է հոգեհանգիստ։

2— Ազգ. Կեդր. դպրոցը, ուր տեղի է ունենալու երեկոյթ—հանդէսը, ամբողջապէս զարդարել և լուսավառել։

3— Առանձին հոգ տանել դահլիճի զարդարանքի և լուսավառութեան վրայ։

4 — Երեկոյթի գրական-երգեցողական-երաժշտական մասից յետոյ ունենալ չքեղ հրախաղութիւն։

5 — Մուտքը ձրի յայտարարել։

Որովհետև ճանապարհների խառնակ դրութեան պատճառով, մինչև Հոկտ. 10 Էջմիածնից չստացուեց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակում յիշուած ծրագիրը և տօնախմբութեան օրն եւ փոխել կարելի չէր, ուստի անհրաժեշտ համարուեց կազմել հետևեալ ծրագիրը և ըստ այնմ էլ կատարել յոբելենական հանդէսը։

(Ա.)

1. Երաժշտութիւն. «Մեր հայրենիք»—խումբը
2. Երգ. «Ով Հայոց Աստուած»—Մ. Եկմալեանի—(քառաձայն) խումբը
3. Արտասանութիւն. «Ո՞վ է հայը»
4. Երգ. «Գարուն ա»—Կոմիտաս վ.-ի—(վեցաձայն) խումբը
5. Ընթերցում. «Պատմ. Ֆռանգստանի»—Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոց» գրքից.
6. Երգ. «Մանուկ Քրիստոս»—Չայկովսկու—(քառաձայն) խումբը

7. Հայոց տառերի գիւտի մասին — կը խօսէ պ. Ալ. Ցովհաննիսեան
8. Երգ. «Անձրեւն եկաւ» — Կոմիտաս վ.-ի — (մե-ցաձայն) խումբը
9. Ընթերցումն. «Յաղագս ջուր ոչ խառնելոյ ի Հաղորդութեան» — Յովհաննէս Մրքուզ (տի-եզերալոյս) վ.-ի «Գիրք վասն խակապէս և ճշմարիտ հաւատոյ» գրքից.
10. Խուլ երգ. (քառաձայն) խումբը
11. Արտասանութիւն. «Մայրենի լեզու»
12. Երգ. «Զէյթունի մարշ» — (քառաձայն) խումբը

Երգեցիկ խումբը երգելու է
պ. Ա. Գերասիմեանի ղեկավարութեամբ:

(Բ.)

1. Երաժշտութիւն. «Հայրենեաց սիրով» — խումբը
2. Արտասանութիւն. «Եղիշէ»
3. Երաժշտութիւն. «Մաղթանք» — խումբը
4. Ընթերցումն. «Յաղագս պատուիրանապահութեան» — Խաչատուր Կեսարացու «Հարանց վարք» գրքից.
5 Երաժշտութիւն. «Դոյ-Դոյ» — խումբը
6. Հայկական տպագրութեան մասին — կը խօսէ պ. Ա. Գերասիմեան

7. Երաժշտութիւն. «Շրջան» — խումբը
8. Ընթերցումն. «Պատմ. և խօսք վաճառականութեան» — Ղ. Վանանդ. «Գանձ չափոց» գրքից.
9. Երաժշտութիւն. «Լօ-լօ» — խումբը

Երաժշտական խումբը նուագելու է
պ. Մկր. Կարապետեանի ղեկավարութեամբ.

(Գ.)

Հ ր ա խ ա ղ ո ւ թ ի ւ ն



Հայ տպագրութեան 400-ամեայ եւ
տառերի գիւտի 1500-ամեայ
յոբելեանի առթիւ

Բաժանւում է ձրի

ՀՀ Ազգային գրադարան
NL0109879